անցնել ամէն փորձանքների, ամէն դժուարութիւնների միջից եւ կուրօրէն դիմել դէպի մի անյայտ նպատակ...

ԺԴ. ԹԷՈՍ ԱԽՊՕՐ ՍՐՃԱՏՈՒՆԸ

Վանայ սրճատները բացւում են արեւի լոյսի հետ եւ փակւում են արեւը մայր մտնելու հետ: Գիշերը ամէն կեանք, ամէն գործողութիւն դադարում է այստեղ: Մարդիկ տնից դուրս չեն գալիս, որ չհանդիպեն ոստիկանութեան կամայականութեանը: Դատարկ փողոցներում թափառում են միայն գողերը ու նրանց ընկեր գիշերապահները:

Անհնարին կը լինէր մի ուրիշ ժամանակ, գիշերոայ այն ժամին, մեր որոնած սրճատունը բաց գտնել, եթէ ռամազանի ամիսը չլինէր: Այդ ամսում մահմեդականների համար ցերեկը գիշեր է դառնում, իսկ գիշերը՝ ցերեկ: Ամբողջ օրը օրուջ (ծոմ) պահելով, նրանք օրոայ մեծ մասը քնով են անցկացնում, իսկ գիշերը արթուն են մնում ուտելու եւ աղօթելու համար: Երբ մտանք քաղաքը, հացթուխների, խոհարարների եւ նպարավաճառների խանութներից շատերը դեռ բաց էին: Փողոցներից նրանք միայն փոքր ի շատէ լուսաւորած էին, որտեղ այս տեսակ խանութներ կային: Կրպակների ճրագի լոյսը տարածւում էր եւ փողոցի մէջ: Մարդիկ դեռ անցուդարձ էին անում: Ոմանք դիմում էին դէպի մեչիդները, իսկ ոմանք՝ հարեւանների մօտ, գիշերը անցկացնելու համար՝ ուտելով եւ հոգեւոր զրոյցներով: Հարուստները այդ գիշերներում իրանց սեղանի շուրջը հաւաքում են աղքատ դրացիներին: Տարոայ մէջ մի ամբողջ ամիս մահմեդականը ողորմած եւ ջերմեռանդ է դառնում:

Երեւում էր, որ Ասլանին անծանօթ չէր Թէոս ախպոր սրճատունը. նա առանց հարցուփորձ անելու ուղիղ դիմում էր դէպի այն կողմը: Երբ հասանք, նա անցաւ սրճատան ետեւի կողմը եւ սկսեց բախել մի փոքրիկ դուռ, որ շուտով բաց արին: Մենք ներս մտանք:

— Կարելի՞ է տեսնել Թէոս ախպորը, — հարցրեց Ալանը դուռը բաց անող ծառայից:

— Նա սրճատանն է, — պատասխանեց ծառան:

— Կանչեցէք այստեղ: Ասացէք, մի պարոն ձեզ հետ գործ ունի:

— Իսկ ձեր անո՞ւնը:

— Իմ անունը ձեզ հարկաւոր չէ, դուք միայն կանչեցէք, նա կը գայ:

Ծառան մրթմրթալով հեռացաւ: Մենք փոքրիկ բակում սպասում էինք: Քանի րոպէից յետոյ ճրագը ձեռին յայտնուեցաւ Թէոս ախպերը, որ նախ մի